ՀԱՐՈՒՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐԸ – ՈՐ Է, ՈՐ ԷՐ և ՈՐ ԳԱԼՈՒ Է

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 1.4-8

4 Հովհաննեսից՝ Ասիայում գտնվող յոթ
եկեղեցիներին: Շնո՛րհ ձեզ և խաղաղություն նրանից,
***որ Է, նաև որ էր և որ գալու է**, և այն յոթ Հոգիներից,*
որ նրա գահի առաջ են, 5 և Հիսուս Քրիստոսից՝
հավատարիմ վկայից, որ անդրանիկն է մեռելներից և
իշխանը երկրի թագավորների:

7 «Ահա նա գալիս է ամպերով, և նրան պիտի տեսնեն
բոլոր աչքերը, նաև նրանք, որ խոցեցին նրան, և նրա
վրա պիտի ողբան երկրի բոլոր ազգերը: Այո՛, ամե՛ն»: 8
«Ես եմ Ալֆան ու Օմեգան (սկիզբն ու վերջը)»,- ասում է
Տերը՝ Աստված, նա, որ Է, որ էր և որ գալու է՝
Ամենակալը:

- *Այսօր մենք հավաքվել ենք ոչ միայն հիշելու մի իրադարձություն, այլ նշելու մի հաղթանակ՝ կենդանի և հավիտենական իրականություն: Զատիկը միայն դատարկ գերեզմանի մասին չէ, այլ իշխող Թագավորի մասին է:*

  Նա անդրանիկն է մեռելներից,

  Նա իշխանն է երկրի թագավորների,

  Նա, որ Է, որ էր և որ գալու է:

Սա պարզապես աստվածաբանություն չէ՝ սա մեր հույսն է:

Ի. ՆԱ ԱՆԴՐԱՆԻԿՆ Է ՄԵՌԵԼՆԵՐԻՑ

Հիսուսը առաջինն է նոր կյանքի հարության մեջ:

Ա Կոր. 15.20 – Քրիստոսը ննջեցյալներից առաջինը եղավ, որ մեռելներից հարություն է առել:

Հարց. *Բայց մեկը կասի. Մեռելներն ինչպե՞ս են հարություն առնում և ի՞նչ մարմնով են գալու (Ա Կոր. 15.35)*

Պատասխան. *Աստված նրան մարմին է տալիս, ինչպես որ կամենում է. սերմերից ամեն մեկին՝ իր մարմինը (Ա Կոր. 15.38):*

Պողոսը այստեղ բացատրում է մի խոր ճշմարտություն՝ այն, ինչ ցանվում է, նույն ձևով չի մնում:

Թրթուռը սողում է գետնի վրա: Նրա կյանքը սահմանափակ է: Բայց մի պահ գալիս է, երբ նա մտնում է բոժոժի մեջ: Այնտեղ տեղի է ունենում մի հրաշք՝

Հին ձևը վերանում է և նորն է ձևավորվում:

*Եվ վերջում՝ նա դուրս է գալիս որպես **թիթեռ**:*

Ցանվում է ապականությամբ → հարություն է առնում անապականությամբ

Ցանվում է անպատվությամբ → հարություն է առնում փառքով (Ա Կոր. 15.42–43)

Որ կփոխի մեր խոնարհ մարմինը, որպեսզի լինի նման Նրա փառավոր մարմնին (Փիլ. 3.21):

Աստված տալիս է նոր մարմին, նոր կյանք և ամբողջական փոփոխություն

Հարությունը նաև թագադրություն էր:

II. ԻՇԽԱՆՆ Է ԵՐԿՐԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ

Հիսուսը ոչ միայն ապրում է – Նա իշխում է:

Մատ. 28.18 – Հիսուսը մոտեցավ, խոսեց նրանց հետ ու ասաց. Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում ու երկրի վրա:

Ղուկաս 4.6 – Եվ սատանան նրան ասաց. ,Այս ամբողջ իշխանությունն ու սրանց փառքը քեզ կտամ, որովհետև ինձ է տրված, և ում ցանկանում եմ, տալիս եմ այն:

Փիլ. 2.9-11 – Հիսուսի անվանը ծալվի երկնավորների, երկրայինների և երկրի տակ

եղողների ամեն ծունկ, և ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է Հոր Աստծու փառքի համար:

Հարությունը խոստում է Նրա վերադարձի:

III. ՈՐ Է, ՈՐ ԷՐ ԵՎ ՈՐ ԳԱԼՈՒ Է

Եբրայեցիս 13.8 – Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

- *Նա միայն անցյալի Փրկիչ չէ – Նա ներկայի Տեր է և ապագայի Թագավոր:*

  Հայտ. 22.12–13 – Ահա շուտով գալիս եմ... Ես եմ Ալֆան և Օմեգան:

  Գործք. 1.11 – Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք համբարձվեց, նույն կերպ էլ պիտի գա, ինչպես որ նրան տեսաք երկինք գնալիս:

Հարությունը նոր կյանքի սկիզբն է:

Ա Պետրոս 1.3-5 – Օրհնյալ է Աստված և Հայրը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ, այն անեղծ, անարատ ու անթառամ ժառանգության համար, որ երկնքում պահված է ձեզ համար, որ Աստծու զորությամբ հավատով պահպանվում եք

փրկության համար, որ պատրաստ է հայտնվելու վերջին ժամին:

Անդրանիկն է մեռելներից

Իշխանն է երկրի թագավորների

Որ է, որ էր և որ գալու է

«Քրիստոս հարյավ ի մեռելոց. օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: